ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզ, ք.Արտաշատ *27.10.2025 թ.*

Սույն թվականի հոկտեմբերի 27-ին ժամը 10.00 ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Մել Մետալ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ, Արարատի մարզ, ք.Արտաշատ, Երևան – Երասխ մայրուղի, 22 – 23 կմ, 20/4 արտադրամաս հասցեում ձեռնարկվող բանեցված կապարաթթվային մարտկոցների վերամշակման արտադրամասի վերազինման(ընդլայնման) գործունեության վերաբերյալ հանրային լսման (առաջին հանրային լսում) նիստը:

Ներկա էին Արտաշատի համայնքապետարանի, ձեռնարկողի՝ «Մել Մետալ» ՍՊԸ, «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչները, համայնքի բնակիչներ (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով կցվում է):

Բացման խոսքով հանդես եկավ Արտաշատ համայնքի ղեկավարի կարգադրությամբ հանրային լսման պատասխանատու(վարող)՝ Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Խաչիկ Պողոսյանը: Նա ողջունեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց բոլորին ներկա գտնվելու համար: Այնուհետև ներկայացրեց հանրային լսման առարկան: Տեղեկացրեց, որ հանրային լսումների վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է Առավոտ օրաթերթում, տեղադրվել է համայնքապետարանի կայքում և փակցվել համապատասխան ցուցատախտակի վրա: Այնուհետև խոսքը փոխանցեց «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության մասնագետ Վռամ Թևոսյանին:

Վ. Թևոսյանը ներկայացավ, մանրամասն ներկայացրեց նախատեսվող գործունեության բնութագիրը և համապատասխան իրավական կարգավորումները: Նա տեղեկացրեց, որ Հայաստանի Հանրապետության համար այսօր լուրջ խնդիր է էլեկտրական մեքենաների մարտկոցների վերամշակման հարցը: «Մել Մետալ» ընկերությունը ներկայում իրականացնում է միայն բենզինային կամ դիզելային շարժիչներով մեքենաների մարտկոցների վերամշակում, որի համար ստացել է համապատասխան լիցենզիա: Նոր ծրագրով նախատեսվում է ոլորտի առաջատար ամերիկյան ընկերությունից գնել լիտիումային և այլ մարտկոցների վերամշակման հոսքագիծ:

Վ. Թևոսյանը հակիրճ ներկայացրեց տեխնոլոգիական լուծումները, նշեց, որ լիտիումային և այլ մարկտոցների վերամշակման տեխնոլոգիան չունի էական բնապահպանական ռիսկեր և հիմնական խնդիրը սպասարկող անձնակազմի պաշտպանության հարցն է:

Այդ նպատակով ՇՄԱԳ հաշվետվությունում կնախատեսվեն բազմաթիվ միջոցառումներ, որոնց իրականացումը թույլ կտա նվազագույնի հասնել այդ ռիսկերը:

Ձեռնարկողի ներկայացուցիչ Արսեն Պետրոսյանը հավելեց, որ իրենք պատրաստ են վերամշակել նաև էլեկտրոնային և կենցաղային սարքերում առկա փոքր մարտկոցները, որոնք նույնպես խնդիր են ներկայացնում, մասնավորապես խոշոր առևտրային կազմակերպությունների պահեստները լցված են նման մարտկոցներով: Հարկ է նաև նշել, որ հետագայում հնարավոր է նաև վերամշակել արևային էլեկտրակայանների օգտագործված կամ խոտանված վահանակները:

Ա. Պետրոսյանը տեղեկացրեց, որ այժմ ընկերությունում աշխատում են 30 հոգի և նախատեսվող գործունեության մեկնարկումից հետո այդ թիվը կավելանա ևս 15 հոգով:

Խ. Պողոսյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք ներգրավելու են համայնքի բնակիչներին, որին ի պատասխան Ա.Պետրոսյանը հայտնեց, որ անձնակազմը գործնականում ամբողջությամբ համալրված է համայնքի բնակիչներով:

Խ. Պողոսյանը ասաց, որ Արտաշատի համայնքապետարանը ողջունում է ցանկացած ներդրում, որը կնպաստի համայնքի զարգացմանը, իհարկե պայմանով, որ կապահովվեն ամենախիստ բնապահպանական և սոցիալական պահանջները:

Խ. Պողոսյանը տեղեկացրեց, որ ներկայացված գործունեությանը նախնական համաձայնություն տրամադրելու վերաբերյալ հարցը, օրենսդրությամբ սահմանված կարգով, կընդգրկվի համայնքի ավագանու առաջիկա նիստի օրակարգում, և դրական որոշման դեպքում կիրականացվի երկրորդ հանրային լսում:

Ամփոփելով առաջին լսման արդյունքները, Խ. Պողոսյանը նշեց, որ իրենք կողմ են այս նախաձեռնությանը՝ բնապահպանական պահանջները պահպանելու պայմանով:

Վարող՝

Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի
գյուղատնտեսության և բնապահպանության գլխավոր մասնագետ Խ. Պողոսյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝ Գ. Հայրապետյան